

- 70. Չլինոսէ տես 'ի ծաղկ . Գ . 57 :
- 71. 'Նէիւր ազգ բանջարոյ , որով նախնիք պսակէին զգուպորայազմ նահատակս խթմեան և 'նեման խաղոց :
- 73. Ասիւրոյ ծերունոյն , այսինքն Եսիողեայ՝ որ յԱսկրայ գեղէ Բիովտիոյ , որ յաջմէ կայ Ելիկոնի :
- 76. Գրիէի աւան յԵւոզիս , ուր էր մեհեան Ապոլոնի 'ի սպիտակ կճէ , պատգամատեղի հռչակաւոր . զոմանս 'ի պատգամաց անտի ստի թարգմանեալ Գալլոսի 'ի լատին տաղս 'ի քերթուածոց Եւսիոբիոնի ուրուան քերթողի քաղկիսացոյ : Յորս էր թերևս և նկարագիր սկզբան գրինեան պատգամատեղոցն :
- 78. Կրկին են Սիլւայ , մին 'նիսեայ մեգարացոց արքայի դուստր , որ մահառիթ հատմամբ հերաց հորն մատնեաց զնա թշնամոյ նորին Մինովայ՝ որոյ սիրովն վառեալ էր , և պատուհասեալ փոխեցաւ յարտոյտ : Իսկ միւսն Սիլւա էր դուստր Փորկոսի , որ քանզի սիրելի էր Գլաւկեայ՝ մտխանք Կիրկէի փոխեցաւ 'ի միջոյ 'ի վայր 'ի կերպ շան . և յարհաւրաց տգեղութեանն ծովամոյն եղեալ , փոխեցաւ 'ի ժայռ՝ ոչ ինչ հեռի 'ի յորձանացն Քարիբդեայ , ուր ահագին մրրկաւ ալէկոծեցան նաք Ռդիսեայ արքային Իթակայ և Դուլքիոնի կղզեաց յոնիական ծովուն : Համբրոս յաւելու զնովաւ և շունս մարդակուս : Աստ Վիրգիլ զերկոսին առասպելն ընդ իրեարս խառնէ , զփորկեանն Սիլւայ զիրս միւսուան յարելով . վասն որոյ սմանք այլազգ կամեցան ընթեռնուլ զայս տող ըստ գրչագրոց ոմանց , բայց և Ովիգիոս և Պրոպերտիոս հանգոյն Վիրգիլեայ զերկոսին Սիլւայս ընդ իրեարս յեռուն :
- 83. Փիւթեւ և Պրոֆէ էին գտերք Պանդիոնի արքային աթենացոց . Տերէոս արքայ թրակիոյ ածեալ զՊրոգնէ 'ի կնութիւն , ծնաւ 'ի նմանէ ուստր զիտիս . և ապա մծղնէարար անօրինեալ ընդ Փիլոմեայ , և հատ զէզու նորա՝ զի մի զոճիրն կարացե պատմէ : Այլ նորա գրով յայտնեալ զայն քեռն իւրոյ , և միաբանեալ զնա ընդ իւր , սպան զԵսիս և մատոյց զնա Տերէոսի հոր նորա 'ի կերակուր : Եւ ապա իբրև զգլուխն ևս որդւոյ նորա ած 'ի մէջ , Տերէոսի զայրագին ձգեալ սուսեր 'ի վեժիմնգրութիւն՝ փոխեցաւ ինքն 'ի յոպոպ , Փիլոմե 'ի սոխակ , Պրոգնէ 'ի ծիծառն , և Իտիս 'ի փասիան :
- 87. Այսինքն որ ինչ Եւրոտաս գետ լուան 'ի Փերեայ , յորժամ սա զգետեղերքն թափառական շրջեր առ սեր Եսիկնութեայ , զայն ամենայն երգէր Սիլեն : Եւրոպոս գետ 'ի Լակոնիս , բղխեալ յԱրկազիոյ , և 'ի անկախիտ սարգենեաց հովանացեալ :
- 90. Մուրակն Աստղիկ երևեալ ընդ այգն՝ կոչի արուսեակ կամ լուսաբեր , իսկ ընդ երկնս գիշերավար : Համարէր սա միաձի կառավարել , ուր արեգակն քառաձի , և լուսին երկձի . բայց ընդ այգն սպիտակ երիվարաւ , իսկ ընդ երկնս թխաձի : Ընդ Բժիստի Ուլիո . քանզի քաղցրութեամբ երգոցն զմայլեալ Ոլիմպ կամ երկին , գժկամակեր ընդ գալ գիշերոյ՝ որ լուցուցանէրն զերգս :

ՄԻՋԻՆ ԴԱՐ՝

Քերմանացի Միկեկիկերաց երգերը :

Բ .

Սալգեր Փօն Ֆօկըլվայտ քերթողն հին Սիսնէսիկերաց մէջ ամենէն աւելի անուանին է : Դնած էր ժԲ դարուն վերջերը՝ որդի թուրկովիացի ազնուականն ազգատոհմի մը . Եւրոպա և Բսիա շատ ճանապարհորդութիւն ընելով , և հռչակաւոր համալսարանաց մէջ , ինչպէս նաև Բարիզ , Կոստանդնուպոլիս ու Պաղտատ երկար ատեն կենալով , այնպիսի դիտողութեամբք ու այնչափ տեղեկութիւններով ճոխացուց իր

միտքն , որ այն ատենուան համար մեծ բան էր : Եւրոպոս բանաստեղծական խանդը կը յափշտակէր զինքը , իր բեղնաւոր ու աշխոյժ հանձարովն՝ աւարառած ճոխութիւնները իր քնարին թելերուն կը յարմարցընէր : Փառասիրութեան խայթ մը չզգալով ներսէն իր անունն ապագայ դարուց մէջ յիշել տալու ընդարձակ դիւցազնական քերթուածի մը հեղինակութեամբ , ինչպէս որ շատերը կը յօրինէին իր ժամանակը , բաւական սեպեց իր մտածութիւններն ու հանապազօրեայ զգացմունքներն երգելու ներդաշնակ ու ազնուական սրտի վայել տողերով , որոնց մէջ երբեմն վարպետ իմաստներ ալ կը ցոլային . որովհետև ոչ միայն հանդիսատես , այլ և մասնակից եղաւ այն նշանաւոր տեսարաններուն ու քաղաքական դիպուածներուն , որ իր աչքին առջև

1 Տես հտ . ԺԵ , էջ 272 , 317 , 373 : հտ . ԺԶ , էջ 110 , 141 , 178 , 294 : հտ . ԺԵ , էջ 39 , 303 :

Հանդիպեցան 1190<sup>էն</sup> մինչև 1230 տա-  
րին : Մտով իր բանաստեղծութիւնն ազ-  
գու և վառվառուն է , միանգամայն դիւ-  
րահասկանալի , որովհետև ճշմարիտ  
զգացմունքներ և պատմական դիպուած-  
ներ կը նկարագրէ : Աթէ կայսերու-  
թեան կռիւները պատմելու ըլլայ , ե-  
թէ իր ժամանակն եղած մեծ խաչա-  
կրութիւնները , և եթէ ինքն իր վշտա-  
ցը վրայ հառաչէ կամ իր հաճոյքներն  
ախորժով ստորագրէ , միշտ կը հաւտայ  
մարդ իր խօսքերուն , որովհետև ճշմար-  
տութեան օժումն ունին : Օ անազան  
նիւթերու վրայ շինուած են իր տաղե-  
րը , ոճն ալ ճկուն է և ամէն նիւթի կը  
յարմարի . ասոնցմէ մէկ քանիին հա-  
ւատարիմ թարգմանութիւնն հոս դնել  
ուզելով , ամառնային երազով մը սկը-  
սինք .

« Երբոր ամառն եկաւ , այն ժամա-  
նակը՝ որ գոյնզգոյն ծաղկոյններ կը պճնեն  
զգալարիս , և թռչունք նորէն իրենց  
երգերը կը սկսին , կը թափառէի ընդ-  
արձակ մարգագետնի մը մէջ , զոր կ'ո-  
ռոգանէր վճիտ առու մը անտառաց խո-  
րէն գալով , ուր կ'երգէ սոխակը :

« Եւր մարգագետնին մէջ գեղեցիկ  
ծառ մը բարձրացած էր , որ յաջող ե-  
րազներ տեսնել կու տար : Եւրեկն փախ-  
չելով՝ թմբի<sup>1</sup> ծառին տակ նստեցայ ,  
որ իր զով հովանին ջրին վրայ կը տա-  
րածէր . և հոն վշտերս մոռնալով՝ ա-  
նոյ ջրուն մը եղայ :

« Մէկէն երազ տեսայ որ բոլոր աշ-  
խարհիս տէր եղեր էի , հոգիս դէպ 'ի  
երկինք կը դիմէր մարմնովս՝ որ իր կա-  
պերէն ազատած էր , և ո և իցէ նեղու-  
թենէ խալըսած էի : Ետուած միայն  
գիտէ ինչ որ եղաւ այն ատեն . բայց ես  
ոչ երբէք այնպիսի աղուոր երազ մը տե-  
սեր եմ » :

Երբոր ճանապարհորդութիւններէն  
դարձած Գերմանիոյ կալուածապետա-  
կան գղեակ մը մտաւ , հետևեալ տաղն  
երգեց , որ ախորժելի բնականութիւն  
մը ու հայրենասէր ոգի կը շնչէ .

« Բարի եկար ըսէք ինձի . որովհե-  
տև երգերով կու գամ ձեզի : Մինչև  
հիմա սնտոի ձայներ լսեր էին ձեր ա-  
կանջները . հիմա երգի հրաւիրեցէք  
զիս , որովհետև հիւրի մը կը սպասեմ  
որ զիս ընդունի : Եւ տալու նուէրս գե-  
ղեցիկ է , ձայնս զձեզ պիտի զմայլեցը-  
նէ առանց նեղութի մը տալու . տուէք  
ուրեմն ինձի այն պատիւն՝ որուն ար-  
ժանի եմ :

« Կու գամ նուիրելու գերմանուհի  
տիկիններու այնպիսի երգեր , որոնց-  
մով աշխարհիս առջև պիտի աւելնայ  
իրենց յարգը : Եթէ վարձք մը չեմ պա-  
հանջեր . այնչափ պատկառանք ունիմ  
անոնց վրայ , որ գանձեր չեմ խնդրեր  
իրենցմէ . հապա միայն իրենց ախոր-  
ժելուն նշան՝ ժպիտ մը :

« Գերմանիա էրիկ մարդիկ պա-  
տուաւոր անձինք են , իսկ կանայք հրեշ-  
տակաց կը նմանին : Ով որ զանոնք վար  
կը զարնէ , խաբուած է . որովհետև  
ուրիշ մեկնութիւն մը չեմ կրնար գըտ-  
նալ : Ով որ առաքինութիւն ու մաքուր  
սէր կը փնտրուէ , թող գայ գտնայ մեր  
երջանիկ հայրենեաց մէջ : Ո՛հ , երա-  
նի թէ կարենամ երկար ատեն բնա-  
կիլ հոն :

« Ետ երկիրներ քալեր եմ , ու ա-  
մէն աղէկութիւննին դիտեր . բայց վայ  
ինձի թէ որ կարենար սիրտս օտար ազ-  
գաց բարբը նախամեծար սեպել : Ին-  
չու համար անպատճառ ծածկեմ ճըշ-  
մարտութիւնը . Գերմանացուց բարբն  
ու կենցաղը ուրիշ ո և իցէ ազգաց մէջ  
չգտնուիր :

« Կլպայէն մինչև ցճռենոս , և ան-  
կէց անդին ալ մինչև ցՈւնգարիա , կա-  
տարեալ բարբ հոն կը տեսնուի : Կրնամ  
ես ապացուցանել զայն . կ'երդնումստա-  
ցուածոցս և կենացս վրայ՝ որ հոնտե-  
ղերու ո և իցէ կարգի կանայքն ընտրե-  
լագոյն են քան զուրիշ աշխարհաց մե-  
ծամեծ տիկնայքը » :

Տօկըլվայտ կրօնասէր ոգւոյ տէր ըլ-  
լալով՝ ինչպիսի եռանդեամբ կը վառուի  
երբոր առաջին անգամ կ'ողջունէ սուրբ  
երկիրն՝ որուն այցելութեան գացեր էր .

<sup>1</sup> Տճ . Օհլաժոր աղաճը :

“ Լյօսօր կը սկսի կեանքս երջանկա- նալ, որովհետև մեղաւոր աչքերս տե- սան սուրբ երկիրը, այն սրբազան հողը՝ զոր բոլոր աշխարհ կը յարգէ: Լըօթք- ներս հուսկ ուրեմն լսելի եղան. տեսայ այն տեղն՝ ուր Լյտուած մարդ եղաւ: ”

“ Արչափ ալ գեղեցիկ ըլլան այն աշ- խարհներն որոնք ինչուան հիմա պար- տեցայ, բայց դու գեղեցիկ ես քան զամենեսեան: Ինչպիսի սքանչելիքնե- րով ստացար այսպիսի փառք մը. կոյս մը, ո՛վ հրաշք անձառելի, որդի մը ծնաւ որ հրեշտակաց վրայ պիտի թա- գաւորէր: ”

“ Հոս մկրտուեցաւ անիկայ՝ մարդիկ մաքրելու համար, հոն թոյլ տուաւ որ ծախեն զինքը՝ զմեզ ՚ի ծառայութենէ ազատելու համար. որովհետև առանց իրեն՝ կորսուած էինք մենք: Աղջոյն ձեզ, ո՛վ խաչ, ո՛վ տէգ, ո՛ փուշք արիւն ուռոգ. վայ անոնց որոնց վրայ կ'իջնայ իր բարկութիւնը: ”

“ Լն աստիճանի կը գթար մարդ- կանց վրայ, որ ամենէն դառն մահուան համբերեց, ինքն ամենակարողն ողոր- մելեացս համար. ուզեց մեզի պէս կոր- ծանեալները կանգնել, ո՛վ զոհ հրաշա- լի որ ամէն հրաշքներէն վեր է: ”

“ Հոս այն գերեզմանէն ուր դրեր էին զինքը՝ մտաւ դժոխք Արդին Լյ- տուծոյ, որ թէպէտ հաւասար էր հօր և հոգւոյ՝ աւելի նուաստ կերպարան- քով երևցաւ հոս քան թէ Լբրահա- մու տեսնուած միջոցը: ”

“ Յետ այնպիսի յաղթանակ մը կանգ- նելու սատանային վրայ՝ որ ամէն թա- գաւորաց յաղթութիւններէն աւելի փառաւոր է, նորէն երկրիս վրայ դար- ձաւ ողջ, և հրեայք տագնապիլ սկը- սան. որովհետև իշխանութիւննին քակ- տուեցաւ, և նորէն իրենց մէջ տեսան զանիկայ՝ զոր զոհեր էին: ”

“ Հոս դարձեալ Տէրն ծանոյց այն ահաւոր օրուան գալուստը՝ յորում սրբ- բոց վրէժը պիտի ինդրուի, և յորում այրին ու նեղեալը պիտի կարենան բու- ղոքել քաջած բռնութիւններնուն վրայ: Երանի այն ատեն ան մարդուն՝ որ իր

յանցանքներուն դարմանն ըրեր է այս աշխարհիս մէջ:

“ Երկրիս վրայ դատաւորներ ու- նինք. նայինք որ ու և իցէ բողոք մէկդի չձգուի. ան որ հիմա կը դատուի՝ նաև այն վերջին օրն ալ պիտի դատուի: Բայց այն մարդն որ պարտքեր կը թու- ղու հոս, ու կը մեռնի առանց հաշտուե- լու, պիտի չգտնայ ան ատեն ոչ երաշ- խաւոր ոչ պատասխանատու իրեն հա- մար: ”

“ Խօսքերս նեղացուցիչ չըլլան ձեզի. ահա կտրուկ կերպով մը ըսածս կը հա- մառօտեմ. ինչ որ Լյտուած աշխարհիս համար ըրեր է՝ աշխարհիս մէջ սկսած է ու աշխարհիս մէջ պիտի լմննայ: ”

“ Տէրն մեր քառասուն օր ալ դեռ կեցաւ աշխարհիս մէջ. ետքը դարձաւ առ Լյտուած. բայց իր ոգին մինչև հի- մա կը թագաւորէ հոն: Սուրբ է այս երկիրը, իր անունն Լյտուծոյ առջև է: ”

“ Բրիտոնեայք, հրեայք և հե- թանոսք կը վիճեն իրարու հետ որ ա- սոր ժառանգութիւնն իրենց կ'իյնայ. թող Լյտուած որոշէ այս վէճն յանուն Երրորդութեանն իւրոյ: Բոլոր աշ- խարհս կը պատերազմի հոս. բայց ի- րաւունքը մերն է, անոր համար յաղ- թութիւնն ալ մերը պիտի ըլլայ: ”

Իր արուեստակցացը վրայ ամենևին նախանձ չունենալէն զատ, մանաւանդ թէ իր բարեկամութեամբն ու սիրովը կը պատուէր զանոնք. ինչպէս որ կը վկայէ հետևեալ սրտաշարժ տունը ժա- մանակակից բանաստեղծի մը մահուա- նը վրայ.

“ Ո՛վ Ռայնմար, կու լամ մահուանդ վրայ. չեմ կարծեր թէ դու ինծի չափ լայիր վրաս՝ թէ որ ես մեռած ըլլայի ու դու ողջ: Համարձակութեամբ կ'ը- սեմ որ աւելի քիչ կը ցաւիմ անձիդ քան թէ այն զարմանալի արուեստիդ վրայ՝ որով զմեզ կը սքանչացընէիր, երբոր ազնուական վախճանի մը կը ծառայե- ցընէիր զայն: Կու լամ ես ճարտասան բերնիդ և ներդաշնակ երգերուդ վրայ: Լնչ, ինչո՞ւ համար ինծմէ առաջ թուան անոնք: Ինչո՞ւ քանի մը վայրկեան ալ

չապասեցիր, որ ես ալ քեզի կ'ընկերէի. որովհետեւ իմ երգերուս կտրելու ժամանակն ալ մտտեցեր է: Արջանիկ ըլլայ հոգիդ: Շնորհակալ եմ քու ազնուական ներդաշնակութիւներուդ համար»:

Այս քնարերգակ հանձարէն ետքը կարգը կու գայ այնպիսի բանաստեղծի մը վրայ խօսելու, որ իր ծանր ոճովը, տաք ու բեղնաւոր երեւակայութեամբն աւելի դիւցազններգութեան յարմար էր, ինչպէս որ քաջ հանդիսացաւ 'ի նմին: Այսօր Լուսինայի քերթողը ծնաւ 'ի Վալիերա՝ ազնուական ծնողքէ ժ. Գարուն վերջերը. ինքզինքը կրթեց բանաստեղծական արուեստին մէջ, հեռաւոր ճանապարհորդութիւններ ըրաւ, և այնպիսի ընդարձակ երկասիրութիւններ 'ի լոյս հանեց, որ նաև իր կենդանութեան միջոցն իր ամէն նախանձորդները մեծարանօք ու զարմանքով կը նայէին իրեն վրայ: Այլ և այլ արքունեաց մէջ պատիւ գտաւ, մասնաւորապէս Տէննէպերկի և Թուրինկիոյ արքունեաց մէջ. և իր բանաստեղծական տաղանդովն, որուն հետ միացած էր հրաշալի հմտութիւն մը, իշխան Սիննէսինկէրաց անուանեցաւ, զոր ինչուան հիմա անկորուստ կը վայելէ: Այլ իրաւընէ արժանի է այս պատուանուանը՝ իր ոճին վայելչութեանն ու իմաստներուն ճոխութեանն համար. իր քերթութեանց մի միայն պակասութիւնը՝ սքանչելեաց յաճախ գործածութիւնն է: Թէպէտ Սուրբ Գրոց բանաստեղծութեամբն ու հին հեղինակաց ոգւովը տոգորուած էր միտքը, բայց անոնցմէ ստացած քերթողական զուտ երեւակայութեանն հետ կ'ախորժէր խառնել միջին դարու առասպելախառն պատմութիւններ, արևելեան վերաշուական երազներ, ու զարմանալի աւանդութիւններ: Իրեն օրինակ առած էր գաղղիացի Գրոսէրիէն ու Գրոստարիէնը, որոնց լեզուն աղէկ կը հասկընար. խել մը մարդկանց բնաւորութիւններ առած է անոնցմէ, զորոնք իր հրաշալի բեղնաւորութեամբն ու

զածին պէս կը հագուեցընէր: Երեսունական և սպանիական աւանդութեանց սիրովը վառուած ըլլալով, որոնք Սինկրալի խորհրդական պատմութեանը մէջ 'ի մի յօդուած են, քաղեց անկէ Գիդուրէլ, Բարսիվալ, և հաւանականապէս նաև Լոհէնկրին քերթուածները: Իր Գուլիելմոս ( )րանժի իշխանին վրայ գրած քերթուածն, և դեռ ուրիշ շատ քերթուածոց մնացորդներն ալ զորոնք իրեն երկասիրութիւնը կը համարի Գիւցազանց Գիւրքը, մէկ կողմանէ կը ցուցընեն իր տաղանդոյն ամէն տեսակ նիւթի յարմարութիւնն ու մէկալ կողմանէ ալ իր աննման համբաւը, որով իր ժամանակը գրուած ամէն բանաստեղծական աշխատասիրութիւններն իր մտաց ծնունդը կը սեպուէին: Իր քնարերգական քերթութիւնները միւս քերթուածոց չափ նշաւաւոր չեն, որովհետեւ փափուկ խանդաղանաց հետ շատ քիչ բարեկամութիւն ըրած է. և Վարդգոսի Կոռնէզատ, որուն վրայ ուրիշ անգամ մը պիտի խօսինք, Լուսինայի մէկ տաղ մը միայն ունի, որ իր հանձարոյն պէս բոյսովաւ է:

Սայնմար բանաստեղծը, որուն մասնունը վրայ Փօկըվայտի շինած տաղը վերը գրինք, ազնուական ազգատոհմէ մը ծնած էր որ հռենոսի ափանց վրայ կը բնակէր: Իր ծանր, վճուական ու տեղ տեղ ալ արուեստակեալ ոճն ան ատենները շատ յարգ գտաւ: Երեսները հոս իր մէկ հոմանաբ, որուն լեզուն վայելչութիւնը դժբաղդաբար թարգմանութեան մէջ կը կորսուի:

«Սիրտս արևուն պէս կը բարձրանայ, որովհետեւ հաւատարիմ ընկեր մը գտաւ. ուր որ տեսնամ զանիկայ, ու և իցէ վիշտ կը փարատի ինձ մէջ»:

«Ուրիշ բան չունիմ նուիրելու իրեն՝ բայց եթէ անձս որ բոլորովին իրենն է, և ամէն անգամ որ իրեն վրայ կը մտածեմ՝ յոյս և ուրախութիւն կը թափանցէ սիրտս»:

«Ինչպէս կ'երջանկացընէ զիս իր այսպէս հաստատուն ըլլալը: Այն ա-

մէն տեղերն ուր կը բնակի ինքը՝ իմ աչքիս առջև աղուոր կ'երևան . թէ որ հարկ ալ ըլլար որ ալեկոծեալ ծովուն մէջէն երթայ , ես ալ հետը կ'երթայի , որովհետեւ բոլոր սիրտս գրաւած է , :

Երջն անուամբ ուրիշ քերթող մը , Ռայնմար Փօն Յվէդէր կոչուած , Սարգսուրկի Կուուոյն մէջ մտաւ , որուն մասնակից եղան Պիդէրոլֆ և Շրայպէր բանաստեղծներն ալ : Շրայպէր մասնաւոր յիշատակութեան արժանի է . իր բուն անունն էր Հենրիկոս Փօն Ռիզպահ , որուն վրայ իր ժամանակակիցքն աւելցուցին Շրայպէր կամ Կեդլնակ մականունը , միանգամայն առաջին պատուանունն ալ կու տային իրեն : Հետեւեալ ուսմանը կը ցուցնէ թէ ինչպէս իր տաղերուն մէջ թեթև մեղամաղձոտութեան մը հետ անխառն ու փափուկ զգացմունքներ կը միանան .

« Ընտանի մէջ երգեցողին կը նմանիմ թէ որ ելլամ գանգատ ընեմ այն ազնուական կնոջ առջև , որ յաղթեց սրտիս և դեռ ամէն օր ալ կը յաղթէ : Կը նմանիմ ես սոխակին որ փուճ տեղը կը շուայլէ իր երգերն և իր քաղցր դաշնակներովը ծանր թշուառութիւններ միայն կը վաստըկի :

« Սայրենի անտառին ինչ հոգն է պզտի թուռններուն միաձայն երաժշտութեանցը վրայ . ինչ մրցանակ կ'ընդունին անոնց ներդաշնակութիւնները : Ըատ խուլ է անտառը , շատ ճարպիկ են որսորդները . չեն գիտեր թէ ինչ բան է անոյշ կերպով շնորհակալութիւն մը :

« Ընիկայ որուն լաւութիւնը հաւասար չէ իր գեղեցկութեանը , անիկայ որ միշտ իմ խանդաղանացս առարկայ եղած է , և ուսկից կը սպասեմ բոլոր իմ միտքարութիւնս , անիկայ կը մերժէ զիս , անիկայ ծաղը կ'ընէ իմ ցաւս : Ը՛հ , թէ որ համարձակէի բարկութիւնս դուրս զեղուլ , ինչէր չէի կրնար զուրցել անոր : Բայց իր վրայ ունեցած ակնածութիւնս կը բռնէ զիս , :

Ըստ յօդուածիս մէջ խօսուած հինգ բանաստեղծներուն ամէնն ալ 1207 տա

րւոյն ողջ էին , և միատեղ ելան ասպարեզ այն հանդիսական կուուոյն մէջ , որուն մասն ունեցան նաև ուրիշ երկու բանաստեղծներ , որոնք անուանի են իրենց հանձարովը : Ըստնցմէ առջինը , Հենրիկոս ( )Ֆդէրտինկ կոչուած , որ Ըստնցմէ քաղաքացի և ասպետ էր , ու երկար ատեն Ըստրիոյ արքունիքը կեցած էր , քանի մը յատուկ ձիրքերով կը փայլէ , որ են՝ նախատիպ տաղանդ մը , ճիւղն միտք , վայելուչ զուրցուածք , ներդաշնակ ու նկարակերտ ոճ . այս ամէն յատկութիւններն արդեամբք կը ցուցնէ իր Սարգսուրկի Կուուոյն մէջ ըրած պաշտպանողական հուշակաւոր ատենախօսութեամբը , և Լաւրինոսի վրայ յօրինած քերթուածովն որ Վիւցազանց Վրբին մէջ բովանդակուած է : Եւ սակայն այս երկասիրութիւններով միայն չէր կրնար ստանալ այն համբաւը՝ զոր միշտ ունեցած է իր անունը : Ընտանիոյս ուրիշ երկասիրութիւններ ալ ելած են իր հանձարէն , որոնց հետքը ջնջեր է ժամանակին հարուածը . անոր համար ճշմարտանման կ'երևայ այն անուանի գերմանացի քննաբանից կարծիքը՝ թէ ( )Ֆդէրտինկ է նիւդելանկ անանուն քերթութեան հեղինակը , որ գերմանական դիւցազներգութեանց մէջ կատարելագոյնն է . ասով հոմերական պարծանաց հաղորդ կ'ըլլայ ( )Ֆդէրտինկ՝ այսպիսի շքեղ պսակ մը ընդունելով գլուխը :

Իր բարեկամը Վլինկսոր Սենգարացին , մեծարեալն յարբունիս Ընդրէասայ ԲԷ , որ հինգերորդ խաչակրութե գլուխ կեցաւ , ոչ այնչափ իր գրուածքներովը ծանօթ է՝ որչափ որ ընդարձակ հմտութեամբն ու մեծ փորձառութիւնը . որովհետեւ հին և նոր ժամանակաց գրականութեանն և ստոյգ գիտութեց տեղեակ ըլլալով , նուրբ պատճառաբանութեան ձիրքն ունենալով , ինչպէս նաև Ըրեմուտի վարդապետութեանցն ու յիշատակներուն , և Ըրեւելքի տեսիլքներուն ու խորհրդական ականդութեանց խորը թափանցած ըլլալով , մոգի պէս մարդ մը սեպուած էր

իր ժամանակը : (Թագաւորներն յարգութիւն ու բանաստեղծները պատիւ կու տային իրեն , և ամենէն աւելի ծանր վէճերու մէջ վճռատու կ'ընտարուէր : Ըստ պիտի պաշտօնով մը ահա Սիննէսինկէրաց կուռոյն մէջ մտաւ անդառնալի վճիռ մը տալու համար . և նոյն առթիւն մէջ ալ ցրցուց իր ընդհանուր գիտութեան ընդարձակութիւնը :

**Հետաքրքրական վիճակագրութիւն :**

Ընդդիացի բանասիրական օրագրի մը մէջ հետեւեալ տեղեկութիւնները կը կարդանք Սեփին Բրիտանիոյ երկաթուղեաց վրայ :

Ընդդիոյ միացեալ պետութեան մէջ 8,024 մղոն ( 1,288 բիւրամղ . 30 ) երկայն երկաթուղիք կան բոլորովին լմնցած , որոնք ծայր ծայրի բերելով ու մէկ գծի վրայ , ամբողջ երկրագունտս կը շրջապատեն ու կ'աւելնան : Ըստ ուղիքս արժեցին 286 միլիոն լիրա սղէոն : Սեփագործութեանց կողմանէ Ընդդիա ունի 50 մղոն ( 80 բիւրամղ . 46 հազարամղ . ) երկայնութեամբ ստոր երկրեայ ճամբաներ . մայրաքաղաքին շրջակաները միայն 11 մղոն ( 17 հազարամղ . 70 ) երկայն այսպիսի ճամբաներ կան : Հողէ ամբարտակները կը չափեն 550 միլիոն խորանարդ եարտ , որոնք կրնան ձեւացնել բուրգն մը մղոն ու կէս բարձր , ունենալով խարխիս աւելի լայն քան զպարտեզն Սէնդ-Ղէյմս : Ըոգեշարժ կարաւանները տարուէ տարի կ'ընթանան 80 միլիոն մղոն ( 12,874, 519 բիւրամղ . ) այս ճանապարհացս վրայ , բաղկանալով 5,000 տեղաշարժ մեքենաներէ և 150 հազար վահաններէ : Տարին կը սպառուի 2 միլիոն դոն կամ տակառաչափ հանքածուխ ( դոնն է 1,016 հազակր . ) . որով մէկ ըրպէի մէջ 4 դոն հանքածուխ կը շոգիացնեն 20 դոն ջուր :

Ըմէն տարի 20 հազար դոն երկաթ կը գործածուի նորոգութեանց համար ,

և 300 հազար գերան ճամբաները գօտեւորելու : Ըստ երկաթուղեաց վրայ կը գործածուին ուղղակի կերպով 90 հազար ոգիք , իսկ երկրորդաբար 40 հազար ոգիք , ընդ ամէնը 150 հազար ոգիք . որոնք իրենց կանամբքը և որդուկք կը կազմեն ժողովուրդ մը 500 հազար ոգիէ բաղկացեալ , որ է ըսել Ընդդիոյ բոլորական բնակչաց 1 առ 50 երկաթուղեաց կը վերաբերի : Յամին 1854 , Բրիտանական երկաթուղիքը 111 միլիոն ճանապարհորդ տեղափոխեցին , և ըստ միջական հաշուի իւրաքանչիւր ճանապարհորդ ընթացաւ 12 մղոն . նոյն տարուան մուտքն եղաւ 20,215,000 լիրա սղէոն : Պատահաբաց թիւն ինչուան հիմա ելաւ 1 առ 7,195,343 ճանապարհորդ : Ընթացողական հեռագրութիւնն ալ կը գրաւէ 7,200 մղոն , և ունի գոնէ մինչև հիմա 36 հազար մղոն երկայնութեամբ թել :

**Վիճակագրութիւն Միացեալ Ամերիկոյ :**

Ըստ անգամ Բազմավիպիս էջերուն մէջ , ինչպէս յայտնի է ընթերցողաց , վիճակագրական տեղեկութիւններ զրած ենք այլ և այլ տէրութեանց վրայօք , որոնք կը լսենք թէ հաճոյ կ'անցնին ընթերցողաց . աս պատճառաւ լաւ համարեցանք կարգով գոնէ գլխաւոր տէրութեանց վրայ չափաւոր տեղեկութիւններ տալ աս տարուան ընթացքիս մէջը . և որովհետեւ Ըմերիկայի տէրութեանց վրայ քիչ անգամ խօսուած է , անոր համար աս անգամուս Միացեալ նահանգաց վրայ կը խօսինք որ զրեթէ հիմակուան աշխարհքիս առաջին կարգի տէրութեանց մէկը կրնայ սեպուիլ : Ըրդ Միացեալ նահանգաց սահմանը Ըրեւելքէն Ըտլանդեան (վիկիանոսն է , Հարաւէն՝ Սեխիգոյի ծոցը , Հարաւային-Ըրեւմուտքէն՝ Սեխիգոյի հասարակապետութիւնը , Ըրեւմուտքէն՝ Խաղաղական